ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԵԴԻԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՉԱՐԵՆՑԱՎԱՆԸ ԱՃՈՂ ՔԱՂԱՔ ԷՐ, ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ ԷԻՆ ԲԱՑՎՈՒՄ, ԻՄ ՄԵԾԱՆԱԼՈՎ ՔԱՂԱՔՆ ԷԼ ԷՐ ՄԵԾԱՆՈՒՄ»

Խորհրդային շրջանում խոշոր գործարանային քաղաքներն այսօր կորցրել են նախկին ակտիվ անցուդարձը, արդյունաբերական գործառույթները, ինչի հետևանքով՝ նաև քաղաքների յուրօրինակ դերը կայուն զարգացման համատեքստում:

Նախկին քաղաքային պատկերն ու ներկայիս վիճակը նկարագրող նյութերից է ***«Վերաիմաստավորելով հետարդյունաբերական քաղաքները»*** լոնգրիդը՝ Աբովյան, Մեծամոր, Չարենցավան և Հրազդան քաղաքների մասին: Հարցազրույցների միջոցով հեղինակը վերհանում է հետարդյունաբերական քաղաքների պատմությունները, մշակութային և գիտական ժառանգությունը, մարդկային պատմությունները: Զրուցակիցները և հերոսները ներկայացնում են նաև այս քաղաքների զարգացման իրենց տեսլականը՝ որպես այլընտրանքային զարգացման տարբերակներ: Հետխորհրդային այս երեք քաղաքներն էլ արժանացել են գրեթե նույն ճակատագրին՝ լքված և կիսավեր գործարաններ, չգործող արտադրական գոտիներ, անմշակ հանրային տարածքներ, գործազրկություն և արտագնա աշխատանք: Սակայն ընդհանրություններից զատ՝ այս քաղաքներից ամեն մեկն ունի յուրօրինակ պատմամշակութային ժառանգություն, տեղի հիշողություն և զարգացման հնարավորություն, որոնց ճիշտ համադրման արդյունքում հնարավոր է այս քաղաքներին նոր շունչ ու կյանք հաղորդել:

«ԴՐԱԽՏ ԷՐ ՄԵՐ ՏԵՔՍՏԻԼԸ, ԴՐԱԽՏ»

Տիգրան Պասկևիչյանի ***«Gallery Տեքստիլ»*** լոնգրիդը խորհրդային տարիների գործարանային քաղաքներից մեկի՝ Գյումրիի Տեքստիլ գործարանի մասին է։ Արխիվային լուսանկարների, տեսանյութերի, հոդվածների և պատմությունների միջոցով հեղինակը փորձել է ներկայացնել կոմբինատի ամբողջ պատմությունը, 1988-ի ավերիչ երկրաշարժը և այն ամենը, ինչ մնաց փլուզումից հետո։

Պատմության հիմնական հերոսներն են Տեքստիլի հանրակացարանում բնակվող երեք տարեց կանայք, որոնք իրենց երիտասարդությունը և նույնիսկ ծերությունն անց են կացրել կոմբինատի պատերի ներսում։

Համակարգչի էկրանը վեր ու վար անելով՝ ընթերցողն ու դիտողը, փաստորեն, հնարավորություն են ունենում հայտնվել խորհրդային արդյունաբերական այս քաղաքներում և, կլանելով պատկերվածն ու ցուցադրվածը, ակամայից դառնում են այդ տեղի հիշողության կրողն ու տարածողը։